

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

## ՔԻՍԻԱ

### ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարությունը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարությունը: Պատասխանների ճնարութիւնը ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

**1** Սոլեկուլի վերաբերյալ ո՞ր պնդումը ճշշտ չէ.

- 1) ունի նույն որակական կազմը՝ անկախ ստացման եղանակից
- 2) քայլայվում է քիմիական ռեակցիաների ընթացքում
- 3) պահպանվում է քիմիական ռեակցիաների ընթացքում
- 4) նյութի հիմնական քիմիական հատկությունների կրողն է

**2** Ո՞ր շարքի բոլոր միացությունների մոլեկուլներում են բացասական լիցք կրող ատոմների էլեկտրոնային բանաձևերը նույնը.

- 1)  $\text{PH}_3$ ,  $\text{N}_2\text{H}_4$ ,  $\text{NF}_3$
- 2)  $\text{H}_2\text{O}$ ,  $\text{H}_2\text{S}$ ,  $\text{H}_2\text{Se}$
- 3)  $\text{H}_2\text{O}$ ,  $\text{O}_2\text{F}_2$ ,  $\text{CH}_4$
- 4)  $\text{Na}_2\text{O}_2$ ,  $\text{Na}_2\text{S}$ ,  $\text{H}_2\text{O}_2$

**3** Միևնույն արտաքին պայմաններում 10 լ ածխածնի(IV) օքսիդի զանգվածը քանի անգամ է մեծ նույն ծավալով հելիուսի զանգվածից.

- 1) 4
- 2) 22
- 3) 20
- 4) 11

**4** Որքա՞ն է սպինային քվանտային թվի գումարային արժեքը  $1s^22s^22p^63s^23p^4$  էլեկտրոնային բանաձևն ունեցող հիմնական վիճակում գտնվող տարրի ատոմում.

- 1) 2
- 2) 3
- 3) 1
- 4)  $1/2$

**5** Ո՞ր շարքում են նյութերը դասավորված ըստ կապի քննության աճի.

- 1)  $\text{HCl}$ ,  $\text{HF}$ ,  $\text{HBr}$
- 2)  $\text{H}_2\text{Se}$ ,  $\text{H}_2\text{S}$ ,  $\text{H}_2\text{O}$
- 3)  $\text{PH}_3$ ,  $\text{AsH}_3$ ,  $\text{NH}_3$
- 4)  $\text{CO}_2$ ,  $\text{SCI}_2$ ,  $\text{CSe}_2$

6

Ո՞ր նյութերի մոլեկուլների միջև կարող են առաջանալ ջրածնային կապեր.

ա) սպիրտներ, բ) ջուր, գ) ալդեհիդներ, դ) կարբոնաթթուներ, է) էսթերներ

- 1) ա, զ, դ
- 2) բ, զ, է
- 3) ա, բ, դ
- 4) զ, դ, է

7

Թթուների ո՞ր զույգի հիմնայնությունը և մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը չեն համընկնում.

- 1)  $\text{CH}_3\text{COOH}$ ,  $\text{H}_3\text{PO}_3$
- 2)  $\text{H}_2\text{C}_2\text{O}_4$ ,  $\text{H}_3\text{PO}_4$
- 3)  $\text{H}_3\text{PO}_3$ ,  $\text{H}_4\text{P}_2\text{O}_7$
- 4)  $\text{C}_{17}\text{H}_{35}\text{COOH}$ ,  $\text{H}_2\text{SO}_4$

(8-9) Ալկինի խտությունն ըստ ֆուռաջրածնի 2,7 է:

8

Որքա՞ն է ածխաջրածնի մեկ մոլեկուլում ատոմների գումարային թիվը.

- 1) 4
- 2) 7
- 3) 8
- 4) 10

9

Որքա՞ն է այդ ածխաջրածնի 108 գ նմուշի զրաղեցրած ծավալը ( $\rho$ ) 330 Կ շերմաստիճանի և 166 կՊա ճնշման պայմաններում ( $R = 8,3 \text{ } \Omega/\text{Կ} \cdot \text{մոլ}$ ).

- 1) 33
- 2) 40
- 3) 24
- 4) 20


10

Ո՞ր դասին է պատկանում 1 : 4 մոլային հարաբերությամբ ֆոսֆորի(V) օքսիդի և  $\text{NaOH}$ -ի ջրային լուծույթի փոխազդեցության ռեակցիան, և ո՞ր աղն է ստացվում.

- 1) միացման,  $\text{Na}_2\text{HPO}_4$
- 2) տեղակալման,  $\text{NaH}_2\text{PO}_4$
- 3) քայլայման,  $\text{Na}_3\text{PO}_4$
- 4) փոխանակման,  $\text{Na}_2\text{HPO}_4$

11

Տրված են հետևյալ ջերմաքիմիական հավասարումները (լուծույթում).



$Q_1$  և  $Q_2$  ջերմաքեկտների ո՞ր փոխհարաբերությունն է ձիշտ.

- 1)  $Q_1 < Q_2$
- 2)  $Q_1 > Q_2$
- 3)  $Q_1 = Q_2$
- 4)  $Q_1 \ll Q_2$

12

Ո՞ր պայմանի փոփոխությունը  $\text{N}_{2(\text{g})} + \text{O}_{2(\text{g})} \rightarrow 2\text{NO}_{(\text{g})} - Q$  համակարգում հավասարակշռության տեղաշարժ չի առաջացնի.

- 1) ջերմաստիճանի բարձրացումը
- 2) ճնշման մեծացումը
- 3) թթվածնի կոնցենտրացիայի մեծացումը
- 4) ազոտի(II) օքսիդի կոնցենտրացիայի փոքրացումը

(13–14) Տրված է  $A_{(\text{g})} + B_{2(\text{g})} \rightarrow AB_{2(\text{g})}$  քիմիական ռեակցիայի հավասարումը.

13

Ո՞րն է տրված ռեակցիայի կինետիկական հավասարումը.

- 1)  $V = k \cdot C(A) \cdot C^2(B)$
- 2)  $V = k \cdot C^2(A) \cdot C(B_2)$
- 3)  $V = k \cdot C(A) \cdot C(B_2)$
- 4)  $V = k \cdot C^2(AB)$

14

Քանի անգամ կմեծանա ռեակցիայի արագությունը միաժամանակ  $A$  նյութի կոնցենտրացիան երեք անգամ մեծացնելիս, իսկ  $B$  նյութի կոնցենտրացիան երկու անգամ փոքրացնելիս.

- 1) 9
- 2) 1,5
- 3) 2,25
- 4) 5

15

Ո՞րն է զազի անջատմամբ ընթացող իոնափոխանակային ռեակցիայի ձախ մասի ուրիշագիրը.

- 1)  $\text{Na}_2\text{CO}_3 + \text{NaHSO}_4 \rightarrow$
- 2)  $\text{Na}_2\text{CO}_3 + \text{BaCl}_2 \rightarrow$
- 3)  $\text{Na}_2\text{CO}_3 + (\text{CH}_3\text{COO})_2\text{Ca} \rightarrow$
- 4)  $\text{Na}_2\text{CO}_3 + \text{MgCl}_2 \rightarrow$

16

Ո՞ր նյութերն են ջրային լուծույթում դիսոցվելիս առաջացնում  $(OH)^-$  իոններ.

- |                       |                       |                         |                                       |
|-----------------------|-----------------------|-------------------------|---------------------------------------|
| ա) KOH                | գ) CH <sub>3</sub> OH | ե) CH <sub>3</sub> COOH | ի) CH <sub>3</sub> NH <sub>2</sub> OH |
| բ) NH <sub>4</sub> OH | դ) CaOHCl             | շ) HOCl                 |                                       |

- 1) ա, բ, դ, ե
- 2) ա, բ, դ, զ
- 3) ա, բ, դ, է
- 4) ա, զ, զ,

17

Ծծմբի և Բերթոլեի աղի միջև ընթացող ռեակցիայում ոքքա՞ն է 2 մոլ վերականգնիչի օքսիդացմանը մասնակցող կեկտրոնների քանակը (մոլ).

- 1) 6
- 2) 12
- 3) 16
- 4) 8

18

Կալիումի նիտրատի ազամ ջրային լուծույթի մեջ ընկղմել են իներտ կեկտրոդներ և անցկացրել հաստատուն կեկտրական հոսանք: Որոշ ժամանակ անց գործընթացը դադարեցրել են և նորից որոշել լուծույթի զանգվածը, որը կազմել է Ե գրամ: Ի՞նչ փոխհարաբերության մեջ են ա-ն և Ե-ն.

- 1)  $a = b$
- 2)  $a > b$
- 3)  $a - b < 0$
- 4)  $a \ll b$

19

Համապատասխանեցրե՛ք նյութի բյուրեղավանդակի տեսակը նյութի ոչ կանոնական անվանման և քիմիական բանաձևի հետ.

Բյուրեղավանդակի տեսակ	Նյութի ոչ կանոնական անվանում	Քիմիական բանաձև
ա) մոլեկուլային	1) գետի ավազ	Ա) CO <sub>2</sub>
բ) ատոմային	2) կերակրի աղ	Բ) Au
զ) իոնային	3) ոսկի	Գ) SiO <sub>2</sub>
դ) մետաղային	4) «չոր սառույց»	Դ) NaCl

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա4Բ, բ2Ա, զ2Գ, դ1Բ
- 2) ա4Ա, բ1Գ, զ4Դ, դ3Բ
- 3) ա4Ա, բ1Գ, զ2Դ, դ3Բ
- 4) ա4Ա, բ1Գ, զ1Դ, դ4Բ

20

Նիկել(II) քլորիդի որոշակի զանգվածով նմուշը լուծել են ջրում և որոշել մետաղի իոնների քանակությունը (ա մոլ): Այնուհետև այդ աղի նույն զանգվածով մեկ այլ նմուշը լուծել են քիչ քանակությամբ ծծմբական թթու պարունակող նույն ծավալով ջրում և դարձյալ որոշել մետաղի իոնների քանակությունը (բ մոլ): Ո՞րն է արտահայտում այդ քանակների ճիշտ հարաբերակցությունը.

- 1)  $a > b$
- 2)  $b << a$
- 3)  $a = b$
- 4)  $b > a$

21

Ո՞ր ուրվագրերը չեն համապատասխանում  $H^+ + (OH)^- = H_2O$  կրծատ իոնային հավասարմանը.



- 1) ա, գ
- 2) ա, դ
- 3) բ, գ
- 4) զ, դ

22

Բոցը դեղին գունավորող մետաղի ո՞ր աղը աղաթթվով մշակելիս կանջատվի 50 % զանգվածային բաժնով ծծումբ պարունակող օքսիդ.

- 1)  $Na_2SO_4$
- 2)  $K_2SO_3$
- 3)  $Na_2SO_3$
- 4)  $KHSO_3$

23

Կոշտ ջրի նմուշը պարունակում է 56,7 մգ/լ կալցիումի հիդրոկարբոնատ և 18 մգ/լ մագնեզիումի սուլֆատ: Ի՞նչ զանգվածով (գ) նատրիումի կարբոնատ է անհրաժեշտ 1 մ³ կոշտ ջրից  $Ca^{2+}$  և  $Mg^{2+}$  իոնները հեռացնելու համար.

- 1) 38,25
- 2) 39,75
- 3) 42,4
- 4) 53

24

**Որո՞նք են բաց թողած բառերը.**

Ամոնիակը ջրում լուծելիս տեղի է ունենում ջրածնի կատիոնի անցում ջրի մոլեկուլից ամոնիակի մոլեկուլին, քանի որ ամոնիակի հատկություններն ավելի են, քան ջրինը.

- 1) թթվային, ուժեղ
- 2) հիմնային, թույլ
- 3) հիմնային, ուժեղ
- 4) վերականգնիչ, թույլ

25

**Միմյանց հետ հպման մեջ գտնվող երկու մետաղներից ո՞րն է ենթարկվում կեկտրաքիմիական կերամաշման (կոռողիայի).**

- 1) առավել պասիվ մետաղը
- 2) առավել ակտիվ մետաղը
- 3) երկուսն էլ հավասարաշափ
- 4) սկզբում պասիվը, հետո ակտիվը

26

**Համապատասխանեցրե՛ք փոխազդող նյութերը, փոխազդեցության ընթացքում ստացվող ջրային լուծույթի միջավայրը և նյութի բանաձևը, որով պայմանավորված է միջավայրի բնույթը.**

Փոխազդող նյութեր	Լուծույթի միջավայր	Նյութի բանաձև
ա) $\text{CaCl}_2$ և $(\text{NH}_4)_2\text{CO}_3$	1) թթվային	Ա) $\text{FeCl}_3$
բ) $\text{Fe}_2(\text{SO}_4)_3$ և $\text{BaCl}_2$	2) հիմնային	Բ) $\text{BaSO}_4$
շ) $\text{FeCl}_2$ և $\text{Na}_2\text{S}$	3) չեղոք	Գ) $\text{NaOH}$
դ) $\text{Na}_2\text{CO}_3$ և $\text{Ba}(\text{OH})_2$		Դ) $\text{NH}_4\text{Cl}$ Ե) $\text{NaCl}$ Զ) $\text{H}_2\text{S}$ Է) $\text{CaCO}_3$

*Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.*

- 1) ա1Դ, բ3Բ, զ3Ե, դ2Գ
- 2) ա1Դ, բ1Ա, զ3Ե, դ2Է
- 3) ա1Դ, բ1Ա, զ3Ե, դ2Գ
- 4) ա2Է, բ1Ա, զ1Զ, դ2Գ

27

Կրաջրի և հետևյալ նյութերից որի՝ փոխազդեցությունից կանշատվի սուր հոտով գազ, եթե այդ նյութի վրա բարիումի քլորիդի լուծույթ ավելացնելիս անջատվում է թթուներում չլուծվող սպիտակ նստվածք.

- 1)  $(\text{NH}_4)_2\text{SO}_3$
- 2)  $\text{NH}_4\text{NO}_3$
- 3)  $(\text{NH}_4)_2\text{CO}_3$
- 4)  $(\text{NH}_4)_2\text{SO}_4$

28

Որքա՞ն է պղնձի(II) նիտրատի ջերմային քայլայումից ստացված գազային խառնուրդում բարդ նյութի ծավալային բաժինը.

- 1) 0,8
- 2) 0,5
- 3) 0,4
- 4) 0,2

(29-30) Տրված են  $\text{Ca}_3\text{P}_2$ ,  $\text{P}_2\text{O}_5$ ,  $\text{HPO}_2$  բանաձևերն ունեցող միացությունները:

29

Ո՞ր շարքում են բերված այդ միացություններում ֆոսֆորի օքսիդացման աստիճանները համապատասխան հաջորդականությամբ.

- 1) +3, +5, -3
- 2) -3, +5, +3
- 3) -3, +5, +5
- 4) +1, -5, -3

30

Ո՞ր շարքում են համապատասխանորեն բերված այդ միացությունների և տաք ջրի փոխազդեցությունից ստացվող ֆոսֆոր պարունակող միացությունների բանաձևերը.

- 1)  $\text{P}_2\text{O}_5$ ,  $\text{H}_3\text{PO}_4$ ,  $\text{H}_3\text{PO}_2$
- 2)  $\text{P}_2\text{O}_3$ ,  $\text{H}_4\text{P}_2\text{O}_7$ ,  $\text{H}_3\text{PO}_3$
- 3)  $\text{PH}_3$ ,  $\text{H}_3\text{PO}_4$ ,  $\text{H}_3\text{PO}_3$
- 4)  $\text{PH}_3$ ,  $\text{HPO}_3$ ,  $\text{H}_3\text{PO}_3$

31


Հետևյալ նյութերից որո՞նց հետ կփոխազդի  $\text{SiO}_2$ -ը համապատասխան պայմաններում.

- ա)  $\text{O}_2$       թ)  $\text{C}$       զ)  $\text{Mg}$       դ)  $\text{H}_2\text{SO}_4$       ե)  $\text{NaOH}$       զ)  $\text{NaCl}$

- 1) ա, դ, ե
- 2) թ, զ, ե
- 3) ա, զ, զ
- 4) թ, դ, զ

32


Համապատասխանեցրե՛ք քիմիական ռեակցիայի հավասարումը և մեխանիզմը.

Հավասարում	Մեխանիզմ
w) $\text{C}_2\text{H}_6 + \text{Cl}_2 \xrightarrow{h\nu} \text{C}_2\text{H}_5\text{Cl} + \text{HCl}$	1) ռադիկալային միացում
p) 	2) էլեկտրաֆիլ տեղակալում 3) ռադիկալային տեղակալում
q) $\text{CH}_2=\text{CH}_2 + \text{Br}_2 \rightarrow \text{CH}_2\text{Br}-\text{CH}_2\text{Br}$	4) պոկում
η) $\text{CH}_3\text{CH}_2\text{CH}_2\text{Cl} + \text{KOH}_{(\text{սպիրտ})} \rightarrow \text{CH}_3\text{CH}=\text{CH}_2 + \text{KCl} + \text{H}_2\text{O}$	5) էլեկտրաֆիլ միացում

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) w1, p5, q3, η4
- 2) w3, p2, q5, η2
- 3) w3, p2, q5, η4
- 4) w3, p2, q3, η4

(33-34) Տրված է փոխարկումների հետևյալ շղթան.



33

Որքա՞ն է  $\text{X}_1$ ,  $\text{X}_2$ ,  $\text{X}_3$  օրգանական միացությունների մոլեկուլներում ջրածնի ատոմների գումարային թիվը.

- 1) 3
- 2) 5
- 3) 7
- 4) 10

34

Ի՞նչ հիբրիդային վիճակում են գտնվում ածխածնի ատոմները  $\text{X}_3$ -ի մոլեկուլում.

- 1)  $\text{sp}^2$ ,  $\text{sp}^2$
- 2)  $\text{sp}$ ,  $\text{sp}^3$
- 3)  $\text{sp}^3$ ,  $\text{sp}^2$
- 4)  $\text{sp}^3$ ,  $\text{sp}$

35

Հետևյալ միացություններից որի՞ և կալիումի հիդրօքսիդի սպիրտային լուծույթի փոխազդեցության արգասիքն է 2,3-երկմեթիլբութեն-2-ը.

- 1) 1-բրոմ-2,3-երկմեթիլբութան
- 2) 2-բրոմ-2,3-երկմեթիլբութան
- 3) 1,2-երկբրոմ-2,3-երկմեթիլբութան
- 4) 2,3-երկբրոմ-2,3-երկմեթիլբութան

36

C<sub>4</sub>H<sub>8</sub>O<sub>2</sub> բաղադրությամբ էսթեռներից քանի՞ սն են տալիս արծաթահայելու ռեակցիա.

- 1)
- 2)
- 3)
- 4)

37

Բութանի և էթիլամինի ըստ հելիումի և հարաբերական խտությամբ խառնուրդին ավելացրել են հավասար ծավալով քլորաջրածին և ռեակցիան ավարտելուց հետո պարզել, որ մնացած զազային խառնուրդի խտությունն ըստ հելիումի ել է:  
Ի՞նչ փոխարարելության մեջ են ա-ն և բ-ն:

- 1) a<b
- 2) a>b
- 3) a=b
- 4) a<<b

(38-39) Տրված են հետևյալ նյութերի անվանումները.

ա) Մեթանոլ,

բ) Փենոլ,

շ) Էթիլենօլիկոլ,

դ) Մեթանաթթու

38

Ո՞ր շարքում են այդ նյութերը դասավորված ըստ նրանց թթվային հատկությունների աճի.

- 1) դ, ա, բ, զ
- 2) բ, զ, ա, դ
- 3) ա, զ, բ, դ
- 4) զ, ա, դ, բ

39

Ո՞ր նյութերը կփոխագրեն նատրիումի հիդրօքսիդի ջրային լուծույթի հետ.

- 1) ա, բ
- 2) բ, զ, դ
- 3) ա, զ, դ
- 4) ա, դ

40

Ո՞ր նյութն է ստացվում քլորքացախաթթվի և ամոնիակի փոխագրեցությունից.

- 1) լիզին
- 2) վալին
- 3) ալանին
- 4) զլիցին

41

HX միահիմն թթվի ջրային լուծույթում HX-ի յուրաքանչյուր չղիտցված մոլեկուլին բաժին են ընկնում  $0,25$ -ական մոլ  $H^+$  և  $X^-$  իոններ: Որքա՞ն է այդ թթվի դիտցման աստիճանը (%):

42

Որոշակի զանգվածով երկաթի մի նմուշը փոխազդել է աղաթթվի հետ, իսկ նույն զանգվածով մեկ այլ նմուշ՝ զազային քլորի: Որքա՞ն է երկաթի նմուշի զանգվածը (q), եթե փոխազդած քլորի զանգվածը 16,75 գրամով մեծ է փոխազդած քլորաջրածնի զանգվածից:

43

Ի՞նչ միջին մոլային զանգվածով (q/մոլ) զազային խառնուրդ կստացվի կարազաթթվի և պրոպիոնաթթվի նատրիումական աղերի  $1 : 1$  մոլային հարաբերությամբ խառնուրդն ավելցուկով չոր նատրիումի հիդրօքսիդի հետ շիկացնելիս:

44

Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ացետիլեն պետք է անցկացնել սնդիկի(II) աղեր պարունակող թթվեցրած ջրային լուծույթով 44 գ ացետալդեհիդ ստանալու համար, եթե հիդրատացման ռեակցիայի ելքը 64 % է:

45

Ծծումբ պարունակող գազային միացության խտությունը  $47^{\circ}\text{C}$ -ում և  $86,32 \text{ kPa}$  ճնշման պայմաններում  $2,6 \text{ g/l}$  է: Որքա՞ն է միացության հարաբերական խտությունն ըստ հելիումի ( $R = 8,3 \Omega/\text{моль}\cdot\text{К}$ ,  $T = 273 \text{ K}$ ):

(46-47) Ազոտի(II) և (IV) օքսիդների զազային խառնուրդում մոլեկուլների թիվը 2,75 անգամ փոքր է ատոմների թվից: 56 լ (ն. պ.) ծավալով այդ խառնուրդը, թթվածնի բացակայության պայմաններում, անցկացրել են ավելցուկով նատրիումի հիդրօքսիդի 232,5 գ ջրային լուծույթի միջով:

46

Որքա՞ն է ազոտի(II) օքսիդի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

47

Որքա՞ն է ստացված լուծույթում մեծ մոլային զանգվածով աղի զանգվածային բաժինը (%):

(48-49) Ածխածնի(IV) օքսիդի և մեթիլամինի 5 լ (ն. պ.) խառնուրդին ավելացրել են 4 լ (ն. պ.) բրոմաջրածին, որից հետո զազային խառնուրդի խոռոչունն ըստ ազոտի դարձել է 2,1:

48

Որքա՞ն է մեթիլամինի ծավալը (լ, ն. պ.):

49

Ի՞նչ ծավալով (մլ, ն. պ.) թթվածին կպահանջվի այդ քանակով մեթիլամինի այրման համար:

- (50-51) Սովորական և ծանր ջրերի խառնուրդում յուրաքանչյուր 50 մոլ պրոտոնին բաժին է ընկնում 41,5 մոլ նեյտրոն:

50

Որքա՞ն է ծանր ջրի մոլային բաժինը (%) խառնուրդում:

51

Որքա՞ն է 366 գ զանգվածով այդպիսի խառնուրդի և անհրաժեշտ քանակով մետաղական նատրիումի փոխազդեցությունից ստացված զազի զանգվածը (գ), եթե ռեակցիաների զազային արգասիքները միայն  $H_2$ -ը և  $D_2$ -ն են:

- (52-53) Միլիցիումի և մագնեզիումի փոշիների խառնուրդը տաքացրել են հալանոթում մինչև ռեակցիայի ավարտը: Ստացված զանգվածը բավարար քանակությամբ աղաթթվով մշակելիս անջատվել է 14-ի հավասար միջին մոլեկուլային զանգվածով 11,2 լ (ն. պ.) ծավալով գազերի խառնուրդ:

52

Որքա՞ն է ջրածնի ծավալային բաժինը (%) ստացված գազային խառնուրդում:

53

Որքա՞ն է սիլիցիումի զանգվածային բաժինը (%) պինդ նյութերի սկզբնական խառնուրդում:

- (54-55) Նատրիումի սուլֆատի նմուշը լուծել են ջրում և ստացել  $113,6$  մլ ( $\rho = 1,25$  գ/մլ) լուծույթ: Այնուհետև ջուրը շողիացրել են և ստացել տասօրյա բյուրեղակիդրատի բյուրեղներ, որոնց զանգվածը 36 գրամով մեծ է եղել ելային նմուշի զանգվածից:

54 Որքա՞ն է անջուր նատրիումի սուլֆատի զանգվածային բաժինը (%) լուծույթում:

55 Նատրիումի սուլֆատի  $10\%$  զանգվածային բաժնով լուծույթ պատրաստելու նպատակով ի՞նչ ծավալով (մլ) ջուր պետք է ավելացնել ելային լուծույթին:

- (56-58) Մազնեղիումի և պղնձի(II) քլորիդների հավասարամոլային խառնուրդը լուծել են  $102,8$  մլ ջրում և ավելացրել արծաթի նիտրատի  $2$  մոլ/լ կոնցենտրացիոնվ որոշակի ծավալով լուծույթ (ρ =  $1,1$  գ/մլ): Առաջացած  $229,6$  գ նստվածքը հեռացրել են և լուծույթի մեջ ընկղմել պղնձե թիթեղ: Ռեակցիան ավարտվելուց հետո թիթեղի զանգվածն ավելացել է  $15,2$  գրամով:

56

Որքա՞ն է քլորիդների ելային խառնուրդի զանգվածը (գ):

57

Որքա՞ն է պղնձե թիթեղը հանելուց հետո մնացած լուծույթի զանգվածը (գ):

58

Որքա՞ն է վերջնական լուծույթում պղնձի(II) նիտրատի զանգվածային բաժինը (%):

- (59-61) Էսթերացման ռեակցիայի համար տրված է եղել 1 լ զազային խառնուրդ՝ բաղկացած 30 մմոլ քացախաթթվից, 45 մմոլ էթանոլից և 1,5 մմոլ ծծմբական թթվից (որպես կատալիզատոր): Հավասարակշռություն հաստատվելուց հետո խառնուրդում հայտնաբերվել է  $0,36$  գ ջուր: Համարել, որ ռեակցիայի հետևանքով խառնուրդի ծավալի փոփոխությունը տեղի չի ունեցել:

59

Որքա՞ն է էթանոլի կոնցենտրացիան (մմոլ/լ) հավասարակշռային խառնուրդում:

60

Որքա՞ն է էսթերացման ռեակցիայի միջին արագությունը [մմոլ/(լ. ր)], եթե նշված փոխարկումը կատարվել է 4 րոպե ժամանակահատվածում:

61

Տաքացման պայմաններում առավելագույնը ի՞նչ նյութաքանակով (մմոլ) նատրիումի հիդրօքսիլ կարող է փոխազդել ստացված հավասարակշռային խառնուրդի հետ:

(62-64) 3 % մոլային բաժնով ծծմբական թթվի 680 գ ջրային լուծույթին ավելացրել են քանակապես փոխազդելու համար անհրաժեշտ 26,48 % զանգվածային բաժնով բարիումի երկիրը բուժատի լուծույթ: Նստվածքն առանձնացնելուց հետո ստացված լուծույթին ավելացրել են 64 % զանգվածային բաժնով կալիումի հիդրօքսիդի 262,5 գ լուծույթ և ստացել նոր լուծույթ:

62

Որքա՞ն է ծծմբական թթվի զանգվածը (գ) սկզբնական լուծույթում:

63

Որքա՞ն է բարիումի երկիրը բուժատի լուծույթի զանգվածը (գ):

64

Որքա՞ն է վերջնական լուծույթում լուծված նյութերի զանգվածների գումարը (գ):

- (65-67) Շատ նոր ազոտական թթվի լուծույթի ( $\rho = 1,05 \text{ g/mL}$ ) մեջ լուծել են  $0,15 \text{ M}$  մոլ մետաղական կալցիում և ստացել  $500 \text{ mL}$  լուծույթ, որում  $H^+$  և  $NO_3^-$  իոնների գումարային քանակը կազմում է սկզբնական ազոտական թթվի լուծույթում առկա նույն իոնների ընդհանուր քանակի  $72,5\%$ -ը: Ուեակցիայի ընթացքում լուծույթի ծավալի փոփոխությունն անտեսել:

65

Որքա՞ն է ազոտական թթվի զանգվածային բաժինը (%) սկզբնական լուծույթում:

66

Որքա՞ն է փոքր մոլային զանգվածով աղի զանգվածը (գ) վերջնական լուծույթում:

67

Ի՞նչ ծավալով (մլ, ն. պ.) զազ ( $NO_2$ ) կանջատվի նշված քանակով կալցիումի և և խիտ ազոտական թթվի փոխազդեցությունից:

68

Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի հավասարումը և դրա անվանումը:

Հավասարում	Անվանում
w) $6\text{CO}_2 + 6\text{H}_2\text{O} \xrightarrow{\lambda\nu} \text{C}_6\text{H}_{12}\text{O}_6 + 6\text{O}_2$	1) սպիրտային խմորում
p) $\text{C}_6\text{H}_{12}\text{O}_6 \rightarrow 2 \text{CH}_3\text{-CH(OH)} - \text{COOH}$	2) ֆոտոսինթեզ
q) $(\text{C}_6\text{H}_{10}\text{O}_5)_n + n \text{H}_2\text{O} \xrightarrow{\text{H}_2\text{SO}_4} n \text{C}_6\text{H}_{12}\text{O}_6$	3) հիդրոլիզ
n) $\text{C}_6\text{H}_{12}\text{O}_6 \rightarrow 2 \text{C}_2\text{H}_5\text{OH} + 2\text{CO}_2$	4) հիդրում 5) կաթնաթթվային խմորում 6) հիդրատացում

69

Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը ալկալիական մետաղների վերաբերյալ.

- 1) Առաջացնում են  $\text{R}_2\text{O}$  բաղադրությամբ հիմնային օքսիդներ:
- 2) Դրանց աղերը հիմնականում ջրում անլուծելի են:
- 3) Նատրիումի հիդրօքսիդի 48 % զանգվածային բաժնով 200 գ լուծույթի մեջ 33,6 լ (ն. պ.)  $\text{SO}_2$  անցկացնելիս կառաջանա 0,6 մոլ  $\text{Na}_2\text{SO}_3$  և 0,9 մոլ  $\text{NaHSO}_3$  պարունակող 296 գ լուծույթ:
- 4)  $\text{H}_2\text{S}-ի$  ջրային լուծույթին դանդաղ  $\text{NaOH}$  ավելացնելիս լուծույթում հաջորդաբար կառաջանան  $\text{NaHS}$  և  $\text{Na}_2\text{S}$  նյութերը:
- 5) Բնության մեջ հանդիպում են միայն ազատ վիճակում:
- 6) Տարացնելիս փոխազդում են ջրածնի հետ՝ առաջացնելով հիդրիդներ:

Ազոտի և ջրածնի 89,6 լ (ն. պ.) խառնուրդին ավելացրել են ավելցուկով թթվածին և պայթեցրել: Ջրային գոլորշիները խտացնելուց հետո մնացած գազային խառնուրդն անմնացորդ փոխազդել է մետաղական լիթիումի հետ: Ստացված պինդ մնացորդի հիդրոլիզից անջատվել է այնքան ամոնիակ, որքան կանչատվեր 128,4 գ ամոնիումի քլորիդի և ալկալու փոխազդեցությունից, իսկ ստացված լուծույթը կարող է չեղոքացնել ազոտական թթվի 4,8 մոլ/լ կոնցենտրացիայով 2 լ լուծույթ: Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ.

- 1) Ավելացրած թթվածնի ծավալը 44,8 լ (ն. պ.) է:
- 2) Ջրային գոլորշիները խտացնելուց հետո մնացած գազային խառնուրդի զանգվածը 42,8 գ է:
- 3) Ելային խառնուրդում առկա ջրածինը կարող է ստացվել 33, 6 լ մեթանի՝ մինչև պարզ նյութեր քայլայումից:
- 4) Պինդ մնացորդում լիթիումի նիտրիդի հետ առկա նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը 30 է:
- 5) Պինդ մնացորդում լիթիումի նիտրիդի մոլային բաժինը 66, 67 % է:
- 6) Ելային խառնուրդում առկա ազոտը կարող է ստացվել 84 լ օդից 80 % ելքով: